01.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
նոյեմբերի 30-ի N 1910 - Ա որոշման

ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱՄՈԳՐԱՖԻԱՅԻ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Շարժական մամոգրաֆիայի սարքավորումն իրենից ներկայացնում է լիովին կահավորված և հագեցած, ջերմակայուն շարժասարք՝ ապահովված գեներատորով և համապատասխան հոսանքակարգավորիչով, օդափոխության և օդորակման համակարգերով, անխափան սնուցման սարքով (հոսանքակարգավորիչով), ներհատակային հատուկ ջեռուցման համակարգով, ներքին և արտաքին լուսավորման համակարգով, ցանցային համակարգով, ավտոմատ ազդանշանային համակարգով, հակահիդեհային անվտանգության ազդանշանային համակարգով, հատուկ նշանակության դռներով, պատուհաններով, աստիճանավանդակով և բազրիքներով:
Շարժասարքը բաժանված է հետևյալ նշանակության 6 սենյակների, որոնք իրարից բաժանված են երկկողմանի բացվող դռներով.
1. Ռենտգեն սենյակ՝ հագեցած թվային մամոգրաֆով Արտադրության երկիրը՝ ԱՄՆ, տարեթիվը՝ 2019 թ., Մոդել՝ Hologic, Selena Dimensions Avia 3000 2D: Թվային մամոգրաֆը ներառում է՝ • մամոգրաֆիա իրականացնող հիմնական սարքավորում, • ղեկավարման վահանակ ռենտգեն ճառագայթներից պաշտպանիչ ապակիով, • համակարգչային աշխատանքային կայան (սերվեր)՝ մամոգրաֆի հետ աշխատելու համար՝ Hologic ֆիրմայի կողմից համապատասխան ծրագրային փաթեթով ծրագրավորված: Ռենտգեն սենյակի դռները, ինչպես նաև բոլոր պատերն ունեն արճիճային հատուկ շերտ բուժանձնակազմին ռենտգենյան ճառագայթումից պաշտպանելու նպատակով:
2. Անձնակազմի սենյակ
3. Ընդունելության սենյակ, սպասասրահ
4. Պացիենտի հանդերձարան՝ 2 հատ

5. Բժիշկների սենյակ
6. Տեխնիկական սենյակ
Բոլոր 6 սենյակները կահավորված են իրենց նշանակությանը համապատասխան:
Կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերման հետազոտությունների արխիվացման և ռենտգենյան պատկերների հեռահար մեկնաբանման համար շարժական մամոգրաֆիայի սարքավորման մեջ ներառվող հետևյալ սարքավորումները տեղակայվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տարածքում: • 1 համակարգիչ՝ մամոգրաֆի հետ աշխատելու համար անհրաժեշտ՝ Hologic ֆիրմայի կողմից համապատասխան ծրագրային փաթեթով ծրագրավորված, • 2 համակարգիչ՝ սքրինինգային հետազոտությունների անցկացման համար անհրաժեշտ հատուկ ծրագրային փաթեթով ծրագրավորված, • հիշողության համակարգ 16S բայթ ծավալով, • 3 հատ թվային տպող սարք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ